շութեամբ նայում է իր տիրոջ վրայ: Երբ նրա կեանքին մի որեւիցէ վտանգ է սպառնում, նա պահապան հրեշտակի նման օգնութեան է հասնում: Ես այդ դիրքն էի բռնել:

Փաշայի առաջին խօսակցութիւնը այն աստիճան քաղցր, սահուն եւ գրաւիչ էր, կարծես մի շաբաթ առաջ սերտել էր այն ջերմ, սրտից բխած խօսքերը: Բայց ոչ թէ մի շաբաթ առաջ, այլ իր ամբողջ կեանքում նա սերտել էր այդ խօսքերը: Օտարերկրացու մօտ այդ հրէշները վերին աստիճանի բարի եւ քաղաքավարի են, իսկ իրանցների մօտ՝ մի խստասիրտ գազան:

Յետոյ խօսակցութեանը ձեւականից աւելի սովորական դարձաւ. խօսում էր նա, ինչ որ առհասարակ խօսում են մի ճանապարհորդի հետ, այն եւս եւրոպացի ճանապարհորդի հետ:

— Հանգի՞ստ անցաւ ձեր ճանապարհորդութիւնը, պարոն բժշկապետ, — հարցնում էր նա: — Յոյս ունեմ, մի որեւիցէ անախորժութիւն պատահած չի լինի ձեզ հետ:

— Առանձին ոչինչ չէ պատահել, ամէն տեղ սիրալիր ընդունելութիւն էի գտնում, — պատասխանում էր Ասլանը:

— Ուրիշ կերպ չէր կարող լինել: Ես ինձ բոլորովին անպատուած կը համարէի, եթէ իմ կառավարութեանը յանձնուած երկրում դուք մի ամենաթեթեւ նեղութիւն անգամ կրած լինէիք: Եւրոպացիք առհասարակ խիստ անպաստ կարծիք ունեն մեր երկրի մասին, համարում են վայրենիների աշխարհ, ուր գլխի մազից օգուտ քաղելու համար մարդկանց կառափնէր են կտրում: Մենք շատ ուրախ ենք լինում, երբ երբեմն մերկողմերում հանդիպում են եւրոպացի ճանապարհորդներ, գոնէ այդ կարծիքը մասամբ կը փարատէին մեր մասին:

— Եւրոպացի ճանապարհորդներից ոմանք շատ լաւ կարծիքներ են յայտնել ձեր երկրի մասին, — նկատեց Ասլանը:

— Արդարութիւնն էլ այդպէս է պահանջում: Այդ գոնէ առիթ կը տար եւրոպացիներին չվախենալ մեր եւրկրից, եւ մենք աւելի յաճախ յարաբերութիւններ կունենայինք միմեանց հետ, եւ մեր երկրի քաղաքակրթութիւնը աւելի եւ աւելի կը ծաղկէր: Իրաւ է, երբեմն մասնաւոր անկարգութիւններ պատահել են (որտե՛ղ չեն պատահում նրանք), բայց այդ եղել է աւելի հին ժամանակներում: Իմ կողմից կատարեալ անհամեստութիւն կը լինէր, պարոն բժշկապետ, իմ բերնով ձեզ ասել, դուք կարող էք այդ եւ ուրիշներից տեղականալ, որ այն օրից, երբ ես ոտք կոխեցի այդ երկրի վրայ, գայլն ու գառը միասին են ապրում, որպէս երկու հարազատ եղբայրներ: